

ՎԵՐԱՆՈՐՈԳՎՈՒՄ ԵՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԳԱՆՁԵՐԸ

Հայոց վանքերում հնուց ընդունված էին գրչատները, որտեղ գրվում կամ ընդօրինակվում էին տարբեր բնույթի կրոնական, բանաստեղծական ու պատմագրական երկեր: Գրչատներին կից գործում էին Ձեռագրի ստեղծման հետ կապված արհեստավորներ: Հատուկ վերաբերմունք կար դեպի Ձեռագիրը ձևավորողը՝ ծաղկողը: Վանքերին կից գործում էին նաև տարբեր տեսակի արհեստանոցներ, որոնցում խմբավորվում էին քարագործ, դարբին, հյուսն, ոսկերիչ, ասեղնագործ, ոսկեթել ու արծաթաթել պատրաստող վարպետներ: Հրավիրվում էին մասնագետներ նաև դրսից: Դարեր շարունակ բազմաթիվ արվեստագետներ ու արհեստավորներ աշխատել են նաև Էջմիածնի վանքում: ԺԷ—ԺԹ դդ. մի փոքր փոխվեց ավանդական այս ձևը: Կոնդակների, ապա և Էջմիածնի վանքի տպարանում հրատարակվող գրքերի համար վանքում աշխատում էին հատուկ նկարազարդողներ (օր. Հարություն Վաղարշապատցին), իսկ խոշոր աշխատանքների համար հրավիրվում էին ժամանակի անվանիները՝ Հովնաթանյան տոհմի նկարիչները:

Ի դ. առաջին կեսում պատերազմների, հայկական ջարդերի, կոտորածների, մեծ գաղթականության հետևանքով համարյա թե դադարեց Էջմիածնի վանքի մշակութային կյանքը: Այն նոր իմաստավորում ստացավ 1955-ից հետո. վանքում նորից սկսեցին գործել տարբեր բնույթի արհեստավորներ: Վազգեն Ա. կաթողիկոսի գործունեության կարևորագույն ձեռքբերումներից էր նաև թանգարանների ստեղծումը, որոնց շնորհիվ հնարավոր դարձավ վանքի գեղանկարչական և կիրառական արվեստի նմուշների ցուցադրումը: Թանգարանները պահանջում էին ոչ միայն ցուցադրության ժամանակակից բարձր մակարդակ (գործը ղեկավարում էր Գ. Խանջյանը), այլև՝ ամենօրյա խնամք ու հսկողություն: Այդ գործի ղեկավար նշանակվեց նկարիչ Անդրանիկ Անտոնյանը:

Ի՞նչ պարտականություններ ուներ մասնագիտական կրթություն ստացած երիտասարդ նկարիչը Էջմիածնի վանքում:

Առաջինը. գեղարվեստական բաժնի վարիչը պատասխանատու է վանքի բոլոր թանգարանների՝ հատկապես Գանձատան գեղարվեստական



Անհայտ հայ նկարիչ, (XVIII դ. վերջ—XIX դ. սկիզբ) Աստվածամայրը մանկան հետ: Հատված: Վերականգնումից առաջ

Անհայտ հայ նկարիչ, Աստվածամայրը մանկան հետ:
Վերականգնման ընթացքը

Անհայտ հայ նկարիչ, Աստվածամայրը մանկան հետ:
Վերականգնման ընթացքը

իրերի պահպանության, մաքրության և երկարակեցության համար: Մի գործ, որը պահանջում է ամենօրյա հսկողություն:

1983-ին, Գանձատան հիմնադրման առիթով, նոր ցուցադրություն կազմակերպվեց նաև Մայր Տաճարին կից թանգարանում (Թ—ԺԹ դդ. բազմաբնույթ կիրառական արվեստի նմուշներ), Հին վեհարանում (կրոնաժիսական արժեքներ), Նոր վեհարանում (դասական և ժամանակակից գեղանկարչություն), թանգարանների ցուցադրության կազմակերպչական աշխատանքներին մասնակցեց Ա. Անտոնյանը:

1983—1985 թթ. Վեհափառ Հայրապետի հանձնարարությամբ ցուցակագրվեցին ու նոր համարակալումներ ստացան Մայր Աթոռի հարստությունները (գեղանկարչություն, կիրառական արվեստի ստեղծագործություններ, գրաֆիկա): Այդ աշխատանքներին մասնակից էր նաև Ա. Անտոնյանը, որը հնարավորություն ունեցավ հաղորդակից դառնալու յուրաքանչյուր իրի պատմագեղարվեստական բնութագրումներին:

Վանքի հարստությունների որոշ ստեղծագործություններ մաքրման ու վերանորոգման կարիք ունեին: Ա. Անտոնյանը մի քանի անգամ գործուղվեց Մոսկվա՝ Վերանորոգման գիտահետազոտական համամիութենական ինստիտուտ, ուսումնասիրեց հատկապես գեղանկարչական ստեղծագործությունների վերանորոգման սկզբունքները:

Մոսկվայում, ուսումնասիրության շրջանում, Ա. Անտոնյանին հանձնարարվեց վերանորոգել ԺԷ դ. ռուսական մի սրբանկար՝ «Աստվածամայրը մանկան հետ», Մոսկվայի մոտ գտնվող Զարայսկի թանգարանից: Ա. Անտոնյանը վերամրացրեց կտավը, յուղաներկի շերտը, լրացրեց թափված մասերը, մշակեց ընդհանուր մակերեսը: Սրբապատկերը տեղ գտավ իր նախկին սրահում: Նոր կյանք ստացավ նաև նույն թանգարանի մեկ այլ աշխատանք. Անհայտ ռուս նկարչի «Ն. Սելիվանովայի դիմանկարը» (ԺԸ դ.):

Առաջին աշխատանքը, որի վերանորոգմանը ձեռնամուխ եղավ Անդրանիկ Անտոնյանը, Էջմիածնի վանքում ԺԸ դ. վերջի—ԺԹ դ. սկզբի Անհայտ հայ նկարչի «Աստվածամայրը մանկան հետ» աշխատանքն էր: Երկար տարիներ այն գտնվում էր Գանձատան պահեստում: Երևում էին միայն Աստվածամոր դեմքը, աջ ձեռքը, մանկան գլուխն ու մի ոտքը: Նկարը ծայրահեղ վատ վիճակում էր. կտավը պատառոտված էր, ներկի շերտը թափված, չորացած ու պոկված: Անտոնյանը հատուկ լուծույթներով փափկացրեց յուղաներկի շերտը, կնճռոտված ու պատառոտված կտավի հատվածները: Յուղաներկի շերտի վրա, ձկան սոսնձի միջոցով, ամրացրեց թափանցիկ թուղթ: Սա անհրաժեշտ էր նկարը նոր կտավի վրա ամրացնելու համար: Նկարի հին կտավի որակին ու գործվածքին համապատասխան նոր կտավի որոնումներով էր պայմանավորված վերականգնման ընթացքի հաջողությունն ու նկարի երկարակեցությունը: Նկարի ետևի կողմի համապատասխան մշակումից հետո, նկարն ամրացվեց նոր կտավի վրա: Ամրացվեց ներկի շերտը, լրացվեցին «կորած» հատվածները, պահպանելով ներկերի համապատասխան համակարգը: Նկարում Աստվածամայրը պատկերված է ծնկներից, կանգնած վիճակում, Մանուկը փարվել է Մորը, այտը դրել նրա երեսին (հորինվածքի այս ձևը հայտնի է «Գորովագին» անվան տակ): Նա մերկ է, ամոթը ծածկված դեղնագույն շորով: Մարիամը կարմիր զգեստով է, կապույտ թիկնոցով, որի երիզներն ընդելուզված են «ոսկեկար» զուսպ զարդանախշերով: Նկարի շրջանակը, որն առանձնացել էր կտավից, նույնպես քայքայված էր: Դա մի մեծ արծաթե շրջանակ էր, որը

ծաղկազարդ երկու այուն էր ներկայացնում, վրան դրվագված ոլորապտույտ զարդանախշերով: Վերևում, շրջանակի մեջ, ներկայացված էր փոքրաչափ մի պատկեր. Աստված, սբ. Հոգին ամպերի մեջ: Շրջանակի ոլորապտույտ տերևները ներկայացված են ոսկեզօծ և շագանակագույն ներկված հատվածներով, որոնք լուսաստվերային և գունային շքեղ անցումներ են ստեղծում: Այս տպավորությունը շրջանակից՝ Անտոնյանի վաստակն է, որը մաքրեց, ամրացրեց կոտրտված հատվածները: Շրջանակի ցածում, սրածայր բուսական շրջանակի մեջ ընթերցվեց արձանագրությունը. «Յիշատակ ընծայ գեղշուք պատկերս սուրբ Աստուածածնի սրբոյ Էջմիածնի վանքին... ձեռն Մարտիրոս արքեպիսկոպոսին Կեսարիոյ Ժրդենց Զմիւռնոյ քաղաքի բարեպաշտունի կանանց միութիւն»: Շրջանակն ու արձանագրությունը ուշ շրջանի են: Կտավը շատ ավելի վաղ ծագում ունի: Նրա գեղանկարչական սկզբունքներում զուգորդված են բյուզանդական ուշ սրբապատկերների և ժամանակի հայ արվեստի պահանջներից թելադրված առանձնահատկությունները: Այստեղ մենք ունենք ազդեցությունների հետաքրքիր զուգորդում:

Ա. Անտոնյանը վերանորոգեց նաև Հովնաթան Հովնաթանյանի (1730?—1801/2) «Աստվածամոր թագադրումը» նկարը, որը արվեստագետը ստեղծել էր 1780-ական թթ., Էջմիածնի տաճարի հիմնավոր ձևավորման ժամանակ: Պատկերը ներկայացնում է բազմաֆիգուր հորինվածք, բազմազան գունային հարստության առկայությամբ: Հայր Աստծո, Քրիստոսի, Աստվածամոր զգեստների գունային կառուցվածքների նրբագույն անցումները, նրանց նյութականությունը, կերպարների, ինչպես նաև հրեշտակների մարմինների ձևերի նուրբ մոդելավորումը Հովնաթանյանի նկարչական բարձր կարողության վկայություններն են: Այս նկարը նույնպես նոր կյանք ստացավ Ա. Անտոնյանի երկար աշխատանքի շնորհիվ: Նկարիչը վերանորոգեց նաև Նոր վեհարանում պահպանվող իտալական նկարչական դպրոցի մի քանի գործեր. «Խաչից իջեցում», «Աստվածամայրը մանկան հետ», «Մարիամ Մագդաղենացին» և մի քանի աշխատանքներ, որոնք այսօր արդեն բոլորովին այլ արտահայտչականություն ունեն: Մայր Տաճարում են պահպանվում Ա. Անտոնյանի վերանորոգած «Հովհաննես Մկրտիչը», «Մկրտությունը», «Սբ. Ստեփանոսը» և այլ աշխատանքներ:

Վանքի ասեղնագործական արժեքների մեջ առանձնակի տեղ է գրավում Մայր Տաճարի Ավագ խորանի երբեմնի վարագույրը: Այն ասեղնագործվել է 1705—1714 թթ. Կ. Պոլսում, Էջմիածնին է նվիրաբերվել տեղի սառաֆների (դրամափոխ) ու արևելյան երկրներից եկած հայ վաճառականների կողմից:

Վարագույրի հորինվածքը բարդ է, բազմանյութ, բազմակերպար և ներկայացնում է Գրիգոր Լուսավորչի տեսիլքը, Գրիգոր Լուսավորիչը մկրտում է Տրդատին, Աշխենին ու Խոսրովադուխտին: Ասեղնագործության մեջ տեղ են գտել նաև առաքյալների, ավետարանիչների կերպարները, հրեշտակների պատկերումներ և այլն: Վարագույրի հորինվածքի նկարիչն է Կ. Պոլսի անվանի նկարիչ ու հրատարակիչ Գրիգոր Մարգվանեցին: Ասեղնագործության զգալի մասը արծաթաթել գործվածք է: Դարերի ընթացքում ասեղնագործությունը կեղտոտվել էր, արծաթյա հատվածները սևացել էին, նկարը կորցրել էր իր արտահայտչականությունը: Ա. Անտոնյանը մաքրեց ասեղնագործության տարածքը, «լվաց» հատուկ լուծույթով և վարագույրը ստացավ իր երբեմնի գեղեցկությունը:

Ա. Անտոնյանի գործունեության մեկ այլ բնագավառը նկարչությունն է: Անցած տասնամյակների ընթացքում ոչնչացել էին հայոց եկեղեցիների խորանները, հատկապես Ավագ սեղանների խաչկալներին փոխարինող արբապատկերները: Վերջին տարիներին ինչպես կանգուն, նույնպես և նորաստեղծ եկեղեցիներում դրվելիք արբապատկերների կարիք առաջացավ: Ա. Անտոնյանը նկարեց մի քանի տասնյակ արբապատկերներ, հատկապես «Աստվածամայրը մանկան հետ» բովանդակությամբ, որոնք դրվեցին Արցախի, Սյունիքի, Ուտիքի, Երևանի և այլ եկեղեցիներում: Այս արբապատկերները, ինքնուրույն ստեղծագործություններ լինելով, միաժամանակ, իրենց գեղանկարչական արմատներով խարսխված են Հովնաթանյան տոհմի նկարչական դպրոցի արվեստի վրա: Այս առանձնահատկությունը հնարավոր է դարձնում հայոց եկեղեցիների նկարչական արվեստի միասնականությունը Մայր Տաճարի ավանդական հարդարանքի հետ:

Գանձատան երկրորդ հարկում գտնվող Ա. Անտոնյաի արվեստանոցում անավարտ կտավներ կան, նոր աշխատանքների նախանկարներ:

ՄԱՆՅԱ ՂԱԶԱՐՅԱՆ